ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 178-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի ԹԻՎ 9 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների այլ փաստաթղթերի տրամադրմա կարգը հաստատելու , Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 596-Ն որոշմամբ, և համայնքապետարանի առաջատար մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1. Թումանյանի համայնքապետարանի կողմից տրամադրված 04.05.2023թ. թիվ 9 շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգել 3 (երեք) ամիս:

2.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտի առաջատար մասնագետ Ռ.Թորոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ/Պ՝ ՌՈՄԱՆ ՇԱՔԱՐՅԱՆ

20 24թ. ապրիլի 26
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 179-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով , ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշմամբ սահմանված կարգով, հաշվի առնելով «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը՝

Որոշում եմ.

1. Ճշտել և հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող Ռազմիկ Եղիկյանին վարձակալության իրավունքով տրամադրված և Արմեն Ռազմիկի Եղիկյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքվ անցած 06-035-0196- ծածկագրից 0,475756 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասի սահմանները համաձայն «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծի:
2. Վարձակալությամբ տրամադրված հողամասի սահմանները որոշվում են համաձայն հաստատված և սույն որոշման հավելվածը հանդիսացող «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծին համապատասխան, որի չափը կազմում է 0,475756 հա:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 29 թ.ապրիլի 29
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 180-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 26.04.2024թ. N 39-Ա որոշումը և ՀՀ Լոռու մարզպետի 11.04.2024թ. թիվ 01/111.3/03203-2024 գրությունը՝

Որոշում եմ.

Չեղյալ համարել Թումանյան համայնքապետարանի կողմից 2024թ. մայիսի 7-ին հայտարարված Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0130-0021 և 06-035-0130-0090 ծածկագրերի անշարժ գույքերի աճուրդ-վաճառքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. ապրիլի 29
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 181-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Գառնիկ Սոսիի Անտաշյանի դիմումը և համայնքային ծառայության առաջատար մասնագետի առաջարկությունը՝
Որոշում եմ.

1.Լոռու մարզի Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0021-0009 ծածկագրի անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ,Լոռու մարզ, Թումանյան համայնք, Թումանյան քաղաք ,9-րդ փողոց, 2/1 հողամաս:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. ապրիլի 29
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 182-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-004-0011-0001,0002 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 և 42-րդ հոդվածներով,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտ արված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ,ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 05.01.2022 թվականի թիվ 14-Ն որոշմամբ, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի տունը և օժանդակ շինությունները չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,հաշվի առնելով համապատասխան որակավորում ունեցող <<ՏՍ- ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված բնակելի տան և օժանդակ շինությունների հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը, չափագրման տվյալների մուտքագրման 2022HHBKYK ծածկագիրը՝ տրված՝ 11.12.2023թ. և Համեստ Ժորայի Գալստյանի դիմումը՝
Որոշում եմ.

1. Հաշվի առնելով հաշվառման տվյալների մուտքագրման 2022HHBKYK ծածկագիրը՝ օրինականացնել Համեստ Ժորայի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող Թումանյան համայնք, ք. Թումանյան 2-րդ փողոց, թիվ 21 բնակելի տուն հասցեում, 06-004-0011-0001,0002 կադաստրային ծածկագրերով 0,072 հա մակերեսով հողամասում 2020 թ.ինքնակամ կառուցված 168,0 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները:
2. Թումանյանի համայնքապետարանի 900265123407 հաշվեհամարին ինքնակամ կառուցված 168,0 քմ արտաքին մակերեսով շինությունների, 4 միջնորմի և 1 տեղադրված պատուհանի համար վճարել 94584 ՀՀ դրամ:
3. Հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Վերջիններիս վճարման անդորրագիրը հանդիսանում է սույն որոշման անբաժանելի մասը:
5. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24թ. ապրիլի 29
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 183-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով՝

Որոշում եմ.

1. Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Թումանյան համայնք, ք.Թումանյան, 6-րդ փողոց, 28/2 հողամաս հասցեում գտնվող, 06-004-0020-0024 կադաստրային ծածկագրի 0,00699 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 24 թ. ապրիլի 30
ք.Թումանյան